

կությունների շինարարության համար հատկացվում է 157 մլն. ռուբլի:

Նոր ստեղծվող գործարանները հագեցված կլինին քարդ և բարձր արտադրողականության սարքավորումով, ժամանակակից տեխնոլոգիայով: Գործարաններում կստեղծվեն շատ լաբորատորիաներ, փորձառական արհեստանոցներ և հատուկ կոնստրուկտորական բյուրոներ:

Նոր գործարանների և արտադրությունների կազմակերպման գործում կարևոր խնդիրներից մեկը հանդիսանում է կադրերի պատրաստումը նոր կազմակերպվող ձեռնարկությունների համար: Բացի այն մասնագետներից, որոնք պատրաստվում են Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտում և ուսուցչիկայի տեխնիկումներում, հարկավոր են սարքաշինության, տեխնիկակայի, թույլ հոսանքի, վակուումային տեխնիկայի, ապակեթելի, մեկուած նյութերի, կիսահաղորդիչների և այլ մամնագետներ:

Այս խնդիրը լուծման համար անհրաժեշտ է մշակել և իրականացնել նշված մասնագետների պատրաստման պլանը, ինստիտուտի առանձին խմբերն ու կուսերը փոխադրելով ժողովրդական տնտեսության համար անհրաժեշտ մասնագիտությունների, ստեղծել նոր ֆակուլտետներ, և հատուկ դասընթացներ կազմակերպելու միջո-

ցով վերավորակավորել մասնագետներին: Հարկավոր է ապահովել առաջատար պրոֆեսիաների բանվորների և ինժեներա-տեխնիկական անձնակազմի պատրաստումը, ուղարկելով նրանց պրակտիկայի լյուս միութեական սեսպուրլիկաների գործող գործարանները, ինչպես նաև ժողովրդական դմբուկրատիայի երկրները:

Նոր գործարանների կազմակերպման գործում լուրջ հարցերից մեկը հանդիսանում է նրանց ապահովումը ու ստանդարտացին սարքավորումով և հատուկ սարքավորանքով:

Նոր ձեռնարկությունների կազմակերպման գործում մեծ աշխատանք պետք է կատարեն «Հայէլեկտրագործարանին» կից էլեկտրաարդյունաբերության գիտա-հետազոտական ինստիտուտի փիլիալի և «Ավտոմատատիկա» ու «Պրոմպրիբոր» հատուկ կոնստրուկտորական բյուրոների կոլեկտիվները՝ էլեկտրական մեքնաների, ապարատների և սարքերի նոր կոնստրուկցիաներ մշակելու համար:

Էլեկտրատեխնիկական և ուղիղութիւնիկական արդյունաբերության, սարքաշինության և ավտոմատացման միջոցների նոր ձեռնարկությունների կազմակերպման ու կառուցման վիթխարի պլանի իրականացումը կվերափոխի մեր ուսուցուրլիկայի արդյունաբերության դեմքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԶՐԵՐԻ ԻՎ ՆՐԱՆՑ ԼՑՄԱՆ ԱՃԻ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Վ. ՎԱՐԴԱԶԱՐՈՎ

Հայզարենանշշուրաբեսի կառավարիչ

Ներկայումս Սովետական Միությունում 42 գործարաններ տարեկան արտադրում են ավելի քան 300 մլն. կեն լիտրանոց շիշ զանազան հանքային շրեր: Այդ քանակից 45 միլիոն շիշը կամ երկրում արտադրված ամբողջ հանքային շրերի 15 տոկոսը կազմում են Հայաստանի հանքային շրերը, մինչդեռ ամերող նախառությունը Պուլաստանում Նարզան, Բորժոմի և Իմելսկայա հանքային շրերի լցումը տարեկան հազիլ էր հասնում 18 մլն. շիշ:

Մեր ուսուցուրլիկայում գրանցված 450 հան-

քային աղբյուրներից և հորատանցքերից առաջատար տեղ են գրավում օքերմուկը, «Արդնի», «Դիլիջան» և «Հանքավան» հանքային շրերը:

«Օքերմուկը» հազվագյուտ հանքային աղբյուր է, որի ջերմաստիճանը կազմում է 56—61°C: «Օքերմուկը» հանքային շրութը իր քիմիական բաղադրությամբ համանման է Կարլովի Վարի հայտնի աղբյուրին: Բժշկությունը լայնորեն օգտագործում է «Օքերմուկը» լյարդի և ստամոքսա-աղիթային տրակտի հիմնադրությունների դեպքում, ինչպիս-

նաև թերմալին ու բալնեոլոգիական բուժման համար:

«Արդին» հանքային ջուրը կիրառվում է սիրտանոթային սիստեմի, ստամոքսա-աղիքային տըրակափի, լյարդի և լեղահան ուղիների խրոնիկական հիվանդությունների ժամանակի:

«Հանքավան» հանքային ջուրն իր քիմիական բաղադրությամբ համանման է նսկնտուկի № 17 չըին: Նա կիրառվում է ստամոքսա-աղիքային տըրակափի, լյարդի և լեղուղիների խրոնիկական հիվանդությունների դեպքում:

«Դիլիջան» հանքային աղբազորի ջրերը կիրառվում են որպես ստամոքսի, աղիքների խրոնիկական բորբոքման, լեղապարկի բորբոքման և այլ հիվանդությունների բուժման լավագույն միջոց:

«Ձերմուկ», «Արդին», «Հանքավան» և «Դիլիջան» հանքային ջրերը հանդիսանում են նաև ծարավ հագեցնող հիանալի խմիչքներ:

Ընթացիկ տարրում Հայկական ՍՍՌ ժողովնախորհի Հայդարեհանքուրպարեստի հանքային ջրերի գործարանները պետք է թողարկեն 45 մլն. շիշ, այդ թվում՝ 20-ական մլն. 0,5 լիտրանոց շիշ աջերմուկ» և «Արդին», 3 մլն. շիշ «Դիլիջան» և 2 մլն. շիշ «Հանքավան»:

Հայաստանի հանքային ջրերը իրացվում են ամբողջ Սովետական Միությունում: «Ձերմուկ» և «Արդին» լայն տարածում են ձեռք բերել սովորական սպառողի մոտ. «Ձերմուկ» հանքային ջուրը ցուցադրվել է արտասահմանյան միջազգային ցուցահանդեսներում:

Հանքային ջրերի պահանջարկի ընդուանման կապակցությամբ ուսուպությունը խիստ ավելացնելու խնդիրը: 2—3 տարի առաջ աջերմուկ» և «Արդին» հանքային ջրերի գործարանները լցումը կատարում էին կիսատնայնագործական, ձեռքի կիսապալումատ մեքենաներով: 1956 թվականի օգոստոսին ավարտվեց «Արդին» հանքային ջրերի գործարանի վերակառուցումը, իսկ նոյեմբերին՝ «Ձերմուկ» հանքային ջրերի նոր գործարանի մոնտաժը, որը հնարավորություն ավելացնելու համար կառավագիր է անցնելու ամենալավ աշխատավորությունը:

Լցման բարձր արտադրողական գծերի կիրա-

ռումը ոչ միայն վճռականորեն բարելավեց թղթարկվող արտադրանքի որակը, աչք հանգեցրեց աշխատանքի մի շարք ձեռքի պրոցեսների մեջ քենայցմանը:

Հանքային ջրերը մինչև լցումը սառեցվում են («Ձերմուկ»՝ 67 աստիճանից, «Արդին»՝ 20 աստիճանից մինչև 8—10 աստիճան): Դա թույլ է տալիս, որ հանքային ջրերը լավ հագեցվեն ածխաթթու գազով, թեև «Արդին», «Դիլիջան», «Ձերմուկ» և «Հանքավան» հանքային ջրերի գործարաններում, թույլ վերահսկողության պատճառով, երբեմն թողարկվում են ածխաթթու գազով թույլ հագեցված և անինամ արտաքին ձևավորում ունեցող հանքային ջրեր:

Սննդի արդյունաբերության վարչությունը, Հայգարեհանքուրպարեստը և գործարանները միջոցներ են ձեռնարկում այդ թերությունները լիովին վերացնելու համար:

Ներկայում հանքային ջրերի գործարանների կարողությունը հասնում է տարեկան 60 մլն. շիշ: 1959 թվականին «Ձերմուկ» և «Արդին» գործարաններում տեղադրվելու են ևս 4 բարձր արտադրողական ավտոմատիկ գծեր, զգալիորեն լավացնելու են «Դիլիջան» և «Հանքավան» գործարանները:

1959 թվականի վերջում հանքային ջրերի գործարանների կարողությունը գերազանցելու է 100 մլն. շիշից:

Նշենք, որ մեր ուսապուրիկայրում ապակե տարայի արտադրությունը խիստ ետք է մնում հանքային ջրերի, անալիկուուլ խմիչքների և գինեգործական արդյունաբերության արտադրության աճից: Միայն ընթացիկ ասարում մեր գործարանները Մերձմուկովյան մարզից և Կոմստանտինովկայից (Դոնբաս) կտանան ավելի քան 30 միլիոն շիշ: Իսկ միայն «Ձերմուկ» և «Արդին» գործարանների օրական դեբիտը համար է ավելի քան 2 միլիոն լիտրի: Ակնհայտ է, որ հանքային ջրերի նորմալ լցման համար անհրաժեշտ է արագացրած տեխմաքերով զարգացնել ապակե տարայի արտադրությունը:

Արդինի ապակե տարայի գործարանի կարողությունը հասնում է տարեկան 24—25 մլն. շիչ այսինքն՝ տարեկան 100 մլն. շիշ լցմելու դեպքում ապակե տարայի դեֆիցիտը, հաշվի ամենու փոխադրումների ժամանակ և արտադրու-

թյան մեջ նրանց կոտրովելը, տարեկան կկազմի ավելի քան 80 մլն. շիշ:

Ուստի, հանքային շրերի արտադրովիան հետագա զարգացման խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է լուծել ապակե տարայի արտադրության հարցը:

Հանքային շրերի լցման աճի հետ միասին խիստ ավելանում է ածխաթթու գազի պահանջը, որի բնական պաշարները մեր ուսուպութիկայում շատ մեծ են: Գեղողդիական վարչության տըկյաններով, օրական կարելի է արդյունահանել 50 տոննա կամ տարեկան 15000 տոննա ածխաթթու գազ: Ածխաթթու գազի պահանջը, հաշվի առնելով նաև հանքային շրերի և անալիտուու խըմիշների արտադրության հետագա զարգացումը, կկազմի տարեկան 1200—1300 տոննա:

Ընթացիկ տարրում ածխաթթու գազի արտադրությունը կկազմի ավելի քան 800 տոննա: Ներկայումս «Ձերմուկ» հանքային շրերի գործարանից 4 կիլոմետր հեռու գտնվող Կեշուու գյուղում կառուցվում է 400 տոննայից ավելի կարողությամբ մի ցեխ, որը ածխաթթու գազ է որսալու տեղական հանքային շրերից: Դա թույլ կտա «Ձերմուկ» հանքային շրերի գործարանին՝ հիմնականում իրեն ապահովել տեղական ածխաթթու գազով:

Մյուս կարևոր հարցը հանքային շրերի փոխադրության հարցն է: «Ձերմուկ» հանքային շրերի գործարանը գտնվում է Երևանից 210 կիլոմետր հեռավորության վրա, իսկ Արագդայան երկաթուղային կայարանից, որտեղ ներկայում բեռների ուղարկման բազա է կառուցվում, 110 կիլոմետրի վրա:

Այն ճանապարհը, որով ներկայումս փոխադրություն են «Ձերմուկ» հանքային շրերը և ապակե տարան, գտնվում է անխման վիճակում: Ուստի անհրաժեշտ է արագացրած տեմպերով կարգի բերել Արագդայան—Արփի—Ջերմուկ խճուղին:

Մինչև այժմ գեռևս չի լուծված «Ձերմուկ» հանքային շրերի փոխադրության հարցը: 44 բեռնատար ավտոմեքենաներից բաղկացած փոքր տրանսպորտային պարկը չի ապահովում պատրաստի արտադրանքի և ապակե տարայի փոխադրությը:

Այս կապակցությամբ Հայաստանի ժողովնախորհը որոշել է մոտ ժամանակներում «Ձերմուկ» հանքային շրերի գործարանին կից ստեղծել ավտոտրանսպորտային պարկ, որը լիովին կբավարարի «Ձերմուկ» հանքային շրի գործարանի կարիքները: